

մենուն ախորժկի և հաւանելի երևիլ կամ որպիսի և իցէ զժողովեանց առիթներ չտալ: Բայց և այնպէս՝ Պ. Առտանեանցի շարահիւսուածքը բարերազգաբար կրնայ անշուշտ ամենուն առ հասարակ հաճելի և ախորժկի ներկայանալ, մանաւանդ թէ նորա ընտրած նիւթը և ժամանակը այնքան ընտիր՝ բարենպատակ և օգտաւէտ է՝ որ մերազնեայ մանկաին ազգային և կրօնասիրական վսեմ և նուիրական զգացմանց մէջ կրթելոյ և վառելոյ համար՝ պէտք է զարգացած ուսանողաց ձեռքը տալ զայն իբրեւ կարեւոր և ընտիր զասագիրք, որ միանգամայն մատենագրական կրթութեանց և կրկնատեսակ թարգմանութեանց կրնայ զիւրութեամբ ծառայել, և կյուսամբ որ ուսուցիչք փորձով աւելի լաւ կհասկանան և կհամոզուին:

Մ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲՈՂՈՒ ՊԱՆԳԻՏԻՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ.

Քեզ ասեմ, ով անողորմ դու Թէհրան,
Մեր հեղ Հայերն ինչ յուսով առ քեզ կզան.
Քեզնից բարիք չի յուսար Պարսիկն անգամ,
Դու թափեցիր նորանց սրբոց ուխտն արեան:
Զունիս Հայոց մի սրբալայր պաշտելի,
Ինչով եղար նորանց այգրան սիրելի:
Նախորդների վիճակն ճշ յիշեցին,
Ուրախ սրտով, մեծ յուսով առ քեզ եկին:
Առաջ ցոյց տաւ աշխատանք՝ շատ դրամներ,
Վերջն նորանց դու կանես ոչինչի տէր:
Մարդիկ բեռնով ըշտապելով քեզ կզան,
Լաւ ծախելով՝ լոկ մուրհակներ կտանան:
Պահեն պինդ պինդ ծալած ձողեր մեծ հաշւոց,
Նոցա յուսով զոհեն զումար դրամոց:

Այսօր վաղն անցանին ժամանակներ,
Եւ ձեռն ունայն քանդուի իւրեանց տուներ:
Նորանց դործն եղեր է, միշտ հառաչանք,
Դատարկ շրջիլ, զոր անցնին անպէտ կեանք:
Անճար «Աստուած ողորմած է» միշտ ասեն,
Եւ ի վերջոյ սեւ հողիդ բաժին յինեն:
Հայոց արեան համար դու շատ ծառա ես,
Առանց ծայնի մին մին նոցա կլանես:
Յանկարծ Թէհրանն ուռած սրտէն փրկօրկեց.
«Ինչո՞ւ տաւ դիւ անարգես, քանատեղծ:
Ես չեմ ապեր, քեզմէ հարցնեմ մին առ մին,
Դու տեղեակ ես քո Ազիկի արածներին:
Ես նորանցն տուած եմ առատօրէն,
Ինչի պէտք է ինձմէ միշտ անգոհ լինեն:
Նորա իւրեանց ճանապարհըն թէ ուղղեն,
Ամենեւին նեղութիւններ չի կրեն:
Լաւ աշխատանք եւ յաջող օր տուեցի,
Շատ փողերով առուտուրով ծաղկեցրի:
Գլխաւորքն տեսար ինչեր արեցին,
Զար նախանձով քանի տուներ քանդեցին:
Քանի իւրեանց դործերն աստ բարի էր,
Պարզեւեմ էր Տէրն յաջող լաւ օրեր:
Հարստացան եղան ամեն փողի տէր,
Հպարտացան օտացան չար ոգիներ:
Թշնամութեամբ Պարսից ինչեր պատմեցին,
Իւրեանց դործի վաղտնիքն ամեն յայտնեցին:
Առ եւ տուրի ձեւերն Պարսիկ իմացին,
Զգուշութեամբ նորանց ձեռքէն խլեցին:
Ինչ խայտառակ բաներ նորա չարեցին,
Ինչքան իրար մեծ մեծ վնաս տվեցին:
Նորանց յաջող շրեղ օրն տեսած ես.
Հիմայ ի՞նչ խեղճ դրութեան մէջ են, դու տես:
Արհեստակից քո ընկերքն լաւ դիտէ,
Նորանց մինչեւ անգամ ձեռքն իմ խնայեր է:
Դոհարեղէնքն ամեն Պարսից արքային,
Որ կարօտ են Հայոց այդ մեծ արհեստին,
Նորերն որ այդ արհեստի մէջ ծաղկիր են,
Իւրեանց մեծի պատուէրներին հնազանդ են:
Անկարող բանի հետեւանքն անկարող է,
Նորա համար երբէք օգուտ չբերէ:
Կան ձեզանէ ոմանք գինի վաճառեն,
Արդեօք նորա իւրեանց դործէն չամաչեն:

Կենդանան մի օր այդ վատ գործերէն,
Թէ ոչ ազգըն խայտառակել ուխտեր են:
Երիտասարդը թող գործող մէջ ծառայեն,
Աշխարհումս ուզեն շատ գործ կմարեն:
Արհեստաւորը իւրեանց գործն են արգելեր,
Չամաշէղով՝ այդ վատ գործին հետեւեր:
Ինչքան ծոյլ են որ այդ բանն կընդունեն,
Խեղճ դիւղացիք էլ միշտ իւրեանց պէս կանեն:
Պանդուխտ դերձակը կըզան օգուտ կրտանեն,
Ջեր նորահասը տես թէ արդեօր ինչ կանեն:
Աշակերտ են զեռ՝ շուտ խանութ կրբացեն,
Տուն ու կինու տնէդէն շուտ պատրաստեն:
Իմ ժողովուրդը չեն նայեր շատ բան կտան,
Բայց ափսո՛ս որ աշխատանքն ի զուր զնան:
Ունիմ ես շատ մեծամարդիկ հարուստներ,
Թող չի նայեն նորանց երբէք մեր Հայեր:
Ունին զիւղեր, եկամուտով շատ ճօխ են,
Չեն խնայեր առատօրէն կմխսեն:
Թէ Հայերն էլ ուզեն նոյնպէս ընթանան,
Իհարկէ որ միշտ պարտքի տակ կմնան:
Նոցա որդիքն սեռեւեռեալ պտըանն,
Չեն մտածեր թէ ապագայ մի ունեն:
Ջեր Հայերն այս մասին ինչ կըկարծեն,
Մեծ ունչ ունին՝ փորրէն մի գործ չսկընեն:
Չարմանալի մի բան մեզմէ ես տեսնեմ,
Չիկայ ուրիշ քաղաքներումս այդ կարծեմ:
Մարդիկ իրանց գործ գործելէն ամաչեն,
Անփող մնալ պարտալ ման զալ կսիրեն:
Այս յանցանքն կարծեմ նոցա ծնողացն է,
Ծառայ չեղած՝ նորանց « աղայ » կըկոչէ:
Ծառաներով լաւ հանդերձով կըպահեն,
Երբ մեծանան զոռող անծինք կլինեն:
Մինչ մարդոյ հետ խօսիլն անգամ քամահեն,
Այսպէս վերջըն նեղութիւններ կըկրեն:
Անփոյթ շուտով նորա փողեր կըվաշխեն,
Էլ այնուհետ երբ այս ցաւէն զերծանեն:
Ինչ աշխատեն՝ վաշխատէն կըտանի,
Թող հասկացողն իմանայ վերջն ինչ լինի:
Ամեն տեղում տուն պահողքն կանայք են,
Արդեօր տեսնեմք մեր Հայերն ինչպէս են:
Մրջունի պէս իւրեանց տունն համբարեն,
Թէ ճանճի պէս մեղրի վերայ կընստեն:
Կուզեն զարդն ու հանդէսներում պտըտել,

Թէ չլինին արք՝ պարտին սեւ օր տեսնել:
Ջեր կանայքն այդքան ցանկան զարդ սիրեն,
Նորա իւրեանց արդեօր օգուտ ինչ բերեն:
Կիսու չափն թէ որ ուսման հետեւեն,
Լինին ուսեալ, եւ զաւակներն կըրթեն,
Պատճառ լինին մարդոյ բարի վեհ անուան,
Ազգի միջում այդպէս զարդեր կունենան:
Թող Հայերն տեղեակ լինեն հաշիւէն,
Ելը մուտքն օրինաւոր պահպանեն,
Կարծեմ իրանց ճանապարհն մոռանան,
Թէ որ ուզեն կարաւարայ ընթանան:
Ինչ որ ուզէ իրանց սիրտն թէ աւնեն,
Ի հարկէ որ միշտ նեղութիւն կըկրին:
Չգուշանան շուայ փարթամ ծախքերէն,
Իւրեանց վերջին օրերըն միշտ մտածեն:
Քեզմէ թէ որ մինն ուղենայ անել հարց,
Ելումուտքիդ հաշիւն ունես

Մ. ԲՅՇԿԵԱՆՅ.

Ի ԹԵՀԷԱՆ

ԿՈԿՈՐԴԻԼՈՍ ԵՒ ՔԱՐՈՋԻՉ ՁՈՒԿ ՄԻ.

Յո մի Նեղոսի եզիրաց վերայ,
Երկու զեղեցիկ եւ փորրիկ տղայք,
Կը խաղային միասեղ՝
Տըղայական խա՛ղ անմեղ . . . :
Շատ մի կըլոր եւ տափակ
Մանրիկ քարեր ժողուելով,
Կը նետէին ջուրին վերայ,
Որ կը սահէր ոստոստելով:
Որքն քարը որ շատ ցատկէր՝
Գետին երես քերելով,
Նա միւս տըղուն յաղթող մեպուէր,
Խընդութեան ծափ զարնելով:
Մէկալ յանկարծ սարսափելի՝ տեսարան,
Կոկորդիլոս մ՝ ելաւ ջրէն տհազին,
Յարձակեցաւ յափշտակեց ըզտըղայն
Չայն՝ որ աւելի մօտ նըստած էր գետին:
Առաւ մըտաւ ջրին տակ,
Ինչ անեղ մահ զըծընդակ: